

Բռնակալներու կախարդական սեղաններուն շուրջը, ցեղիս պարկեշտ ողկոյղները պիտի բաժակներուն մէջ քամեցին:

Անպատիւն վրայ, սպաններն իրենց կառուով ցեղիս տաղանակները քանդակեցին:

Հողը խմեց, հողը ծծեց մեր աբխներ, սեւ հողին տակ ծաղկելու համար ծեցանք:

Այգիով ցոյգիով յայտնուէր համբէն քաղցիքը, հողէ վաղիքի հզնամամուն ջախջախ ոսկրեան փոս մը չի գտաւ:

Ընդ ջարդերով անմահացեցին. հրաքաններու փայլակները մեր գլխին լոյս պսակներ հիւսեցին:

Ընդ քաղցի ու յոյս ցեղիս սեւ օրերուն նստ խաւքին:

Ջարգեցին, ջարդեցին և մեր մարմնում նաւատակներուն վրայ հողեհանգիստ սաղմուտոյ քանանայ մը չի թողուցին:

Հայուն գրախա հողին վրայ գծուքի գուռը քայցին:

Ընդ աբխները նաւատակներու սուրբ ոսկրներով սաւ լարեցին:

Հայուն Առաւուռը յուզուած իր աշունները գոցեց:

Տաճարներուն մէջ սուրբ ապստներու խաբույրին վրայ մեր վարդապետներն ողջ ողջ շամբուրեցին:

Անցան, անցան մեր ժողովուածներու ուրուականները և մեր յոյսին վստ ճրագները մի առ մի մարեցին:

Հոն ուր ծաղիկ չի բուսիր, եղբիկի ալքով դեղանի Նամունան իր ոսկերիւս վրանէն դուրս ելաւ, տեսաւ մեր դազաղին անցիլը, զրոտաններու պարեհգութիւնը դազարեցուց, և քնքռւ ծղիլները գէպ ի երկինք բարձրադաղակ դուռաց. «Ալլահ, մի՛թէ հայ ցեղին անունը մարած արեւի մը սեւ թեւերուն վրայ քանդակեցիր»:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



Հ Ե Լ Ե Ն Ի

ՈՂՔԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԷՍՍ

(Շար. տես. Բզմ. 1920 էջ 15)

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Կոռնակայական պայատիկն մէջ Նէոպոտոմֆոսի տպարանքը.

ՏՆՍԻԼ Ա.

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ. ՀԵԼԵՆԵ

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Ե՛կ, Ե՛կ գրկացո մէջ, սիրեցեալդ իմ Հելենէ, դուստր իմ նազելի. զի դու ես իմ մի միայն ծիծաղոս և մխիթարութիւնս սա օտար երկրիս, սա կամաւոր աքսորիս մէջ:

ՀԵԼԵՆԵ

Ինչո՞ւ, Հայր, Հայաստանի վրայ կուտակալ ըլլալդ աքսոր կը կոչես:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Կուտակալ... ա՛հ, սխտոյ անուն, խաբուսիկ տիտղոս. այո՛, երբեմն էի կուտակալ երբ Աղեքսանդր դեռ կենդանի էր, բայց այսօր... այլ ևս հայրենիքէն հեռու ըլլալն աքսոր կը համարիմ ես: Դարձեալ ո՞ր իշխանութեամբս կուտակալ եմ. Արդուարդ հոս կը հրամայէ, ինքն է երկրիս տէրն և իշխանն. իրեն Հայք կը հնազանդին և ինքն ալ ծերակուտին: Իսկ քու հայրդ պարզ հարկահան մը կը կոչեն և իբրև օտարական մը կ'անադգեն: Հայք զիս իրենց մէջ բռնաւորի տեղակալ կ'անուանեն և ըստ այնմ ձեռքիս մէջ Պէրթիկէսի խարազանը և կամ սուրը կը տեսնեն: Ո՛հ, այս վիճակս անհանդուրժելի էր, եթէ հին վրէժ մը սրտիս մէջ չըսնուցանէի. այո՛, ամենայն անձկանօք առթի մը կ'սպասեմ, որպէս զի սա Հայերէն կրած նախատանացոս և փնասուցոս վրէժն հանեմ:

ՀԵԼԵՆԵ

Ձիս կը սոսկալցնես հայր... երբէ՞ք այդպէս խօսած չ'էիր:

ՆԵՈՊՏՂՈՄԷՈՍ

Ա՛հ, բաւական լռեցի, բաւական կեղծաւորեցայ. կը կարծեմ որ վրէժխնդրութեան ժամն մօտ է: Պէրթիկէս վերջապէս զՄակեդոնիայ և բոլոր կայսերութիւնը գրեթէ խաղաղելով ներքին երկպառակութիւններէն, այժմ ապստամբեալ հպատակները և ժողովուրդը դարձեալ զինուոք

նուաճել կը շնայայ, այլ և Հայոց քանի մը տաւրի առաջ յանդուգն վտարանշուժիւնն ալ մոռցած չէ. իսկ հոս ամէն չարժմուռք իմ միջոցաւս կը տեղեկանայ: Երեկ դեռ իւր կողմանէ սուրահանդակ մ'իմէ գաղտնորէն հասնելով կը ծանուցանէր, թէ Մանգրոնացի հզօր բանակ մը Հայաստանի մէջ մտնելու պատրաստ էր և միայն իմ անխաբիւթեանս կ'սպասէր: Ուստի, կը կրկնեմ, առիթ մը, պատճառ մը միայն կը խնդրեմ, որպէս զի միւսանգամ սա խստապարանոց Հայոց տիրաբար հրամայեմ:

ՀԵՆՐԻ

Բայց ի՞նչ պատճառ այդպէս զքեզ Հայոց դէմ կը զրգռէ. կը տեսնեմ որ Արդուարդ իշխանն եղբօր պէս հետք կը վարուի և պատշաճ մեծաբանքը քեզ կը հատուցանէ. իսկ զիս ալ իւր դուստրը կը կոչէ:

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Կասկածէ՛ դուստր իմ իւր հայրական համբոյններէն. զի մեր մէջ եղած առեւտրիւնն շատ հին է, բայց խորամանկութեամբ իրարու առջև կը կեդաւորիմք, և ստոյգ եմ թէ ինքն ալ զիս չարաչար կ'ատէ, ինչպէս ես ալ զինքն: Կը զարմանամ՝ այնպէս չէ՞... սակայն քեզ լռած էի մինչև հիմայ առեւտրիւննս պատճառը. դու այն ստին վեց տարեկան էիր... այլ միթէ՛ ամենակին չ'ես յիշէր այն ահաւոր և որոտընդոտ գիշերն, երբ զքեզ ի գիրկս առած կրակի բոցերու և երկաթներու մէջէն անցընելով փախուցի:

ՀԵՆՐԻ (Իբր քե միտքին մէջ որոնելով)

Այո, աղօտ մը կը յիշեմ, թէ փայլուն և հրաշէկ երկաթներ զլիւոյս վրայ կը շողային, արևինն գետի պէս կը վազէր... բայց զրեթէ մոռցած էի, դու հիմայ զայս ինձ կը յիշեցնես:

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Գիտցիր ապա՝ թէ Հայք էին, որոնք մեծին Աղեքսանդրի վախճանելէն վերջը ապստամբելով, զիս՝ քու հայրդ՝ ուզեցին սատակել քու հետդ: Հազիւ թէ զքեզ անոնց կատաղութենէն ազատեցի, սակայն մայրդ...

ՀԵՆՐԻ (զայրահուրած)

Մայրս...

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Ո՛հ, խեղճ կինն դժոխային կատաղեաց ձեռքէն իրկաւ սրախողիող:

ՀԵՆՐԻ (աչքը սարքելով)

Ո՛հ մայր իմ...

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Քափէ՛ արտաւերջ, դուստր իմ սիրեցեալ. ի՞նչ

թէ սա կաթիլներն տալին կոյս սրտիդ այն խաղաղութիւնը, զոր հայրդ ի գուր կը փնտռէ: Վասն զի Հայոց դէմ անհաշտ քէն մը՝ ցամաքեցուց աչաց մէջ այն բարեբար աղբիւրները. տասը տարիէ ի վեր արտաւերջ խոյս կու տան հօրդ աչերէն. հուրի՛ր՝ ապա և հօրդ համար սա կաթիլները մօրդ տխուր յիշատակին և խոստացիր իրեն իմ կողմանէս, թէ աս թափած կաթիլներդ աւելի Հայ գլուխք պիտի կտրեմ, որպէս զի իւր վրէժը հանեմ: Այդ աղէտայի դէպքը մինչև հիմայ կամաւ քնէն լռեցի, վասն զի չ'էի ուզում զուարթ օրերուդ մէջ մահացու թոյն մը խառնել. իսկ այսօր դիտմամբ զայն քեզ կը ծախուցանեմ, որպէս զի տարօրինակ և անիրաւ չ'երևայ քեզ Հայոց դէմ ունեցած քէնս և որպէս զի չըհաւատաւ Հայ իշխանին բարեկամական համբոյններուն:

ՀԵՆՐԻ

Սակայն Արդուարդ...

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Ո՛հ, լո՛ւ՛ է եղկելի. գուցէ մայրդ իւր ձեռքէն մահն ընդունեցաւ. վասն զի ինքն էր ապստամբ բաց զլուին և առաջնորդն:

ՀԵՆՐԻ

Ո՛հ, ինչէր լսեցի... տղայութեանս օրէն ուրեմն թշուառութիւնը խորան ընտրած են իմ սիրտս... սակայն կ'ընտրէի մանաւանդ որ այդ սոսկալի դէպքն յաւիտեան ինձ լռելիւ հայր: Ձի ի՞նչ բանի կը ծառայէն այսօր ապաժաման արտաւերջ, միայն թէ վշտացս փունջը կ'ստուարացընեն: Երկինք, կասկածե՛լ այդպէս բարեկամաց վրայ և անտեղ ճակատին վրայ չարունակ առեւտրիւնը կորդալ... Ի՛նչ ահաւոր տանջանք... կոյր վստահութեան տեղ՝ ծախիչ կասկած մը սնուցանել սրտիս մէջ... այլ և կրնամ չը հաւատալ Արտաւարդայ բարեկամութեան, մտածութիւնն միայն մահէն աւելի դժնդակ է ինձ: Հայր իմ, ի՛նչ դառն և մահացուցիչ կասկած սրտիս մէջ արթնցուցիր:

ՆԵՌՈՂԱՐՄԵՆՈՍ

Արտաւարդայ վրայ կրնաս վստահիլ Հէնչէն. ինձ անծանօթ չ'է ձեր փոփոխակի սէրն, Արտաւարդ ինձ ալ սիրելի է, գուցէ անոր համար որ դու գինքն կը սիրես. դարձեալ թէպէտև Արդուարդայ ուղղին է և բնականապէս մեր թշնամին, ի վերայ այս ամենայնի համակրութիւն մը, սէր մը կ'զգաւ. իւր քաջութիւնն, իւր առաքելի և անխելէ կենցաղավարութիւնն, իւր անուշ բարքն, իմ սիրտս իրեն գրաւեցին. ապա ներքին խնդուրեմքով, թէ ի՞նչ տուի որ զքեզ սիրէ: Ուստի կը կրկնեմ, թէ և հայրը չարաշար ատեմ, զորդին՝ իմ զաւկիս պէս կը սիրեմ, այնպէս որ կեանքս ալ իրեն համար կը գոհեմ, ինչպէս պատրաստ եմ քեզի համար ալ գոհելու, եթէ հարկն պահանջէ: Արդ ի միտ առ ըսածս, սիրէ՛ զորդին սակայն ատէ՛ զհայրն:

ՀԵԼԵՆԵ

Բայց ի՞նչ վիշտ սիրել զորդին՝ զհայրն ատելով, յիշել միշտ թէ մօրս դահիճն է, կասկածել ալ թէ նոյն ձեռքն պատարաստ է, արկածի մը, զուցէ օրուան մը կ'սպասէ, որպէս զի հօրս կենանքն ալ խզէ: Ո՛հ, կը կրկնեմ քեզ հայր իմ, բնաւ չ'էի փափաքեր զիտնալ մօրս թշուառ վախճանը. զի այսօր երկու հակառակ վիշտերէ բղխած արտաւանքն իրարու պիտի խառնուին, մէկն միւսոյն սրբութիւնը պիտի պղծէ, դարձեալ այս իրարու ոտին կաթիլներն քու զուտորդ մայելով, ժամ մի առաջ զերեզմանի փոսին մէջ պիտի ինջընեն: Այլ և միթէ խաթթ մը չի՞ պիտի ըլլայ խզիս, յիշելով որ մայրս սպաննողին որդւոյն հետ սիրտս սիրով կապուած է:

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ

Իրեն համար զգացած չափազանց համակրուածիս՝ մոռցնել տուաւ ինձ իւր դժխեմ ծնունդը. ապա կրնաս դու ալ անխիղճ զինքն սիրել, կը պահանջեմ ալ որ զինքն սիրես, վասն զի իւր մահն ուզենի՝ զքեզ ալ հետը սպանել է. ուստի ի՞նչոքեմ որ ապրիս Դարձեալ ինձ միայն պահած եմ հօրմէն վրէժ առնելու պարտքը. նա՛ զի հօր զլուին միայն վրիժապարտ է, անմեղ է որդին:

ՀԵԼԵՆԵ

Անմեղ, այժմ. առ այս իմ սիրտս ալ կը վկայէ, սակայն ո՛չ բոլորովին անկեղծ, զոնէ այս անգամ:

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ

Բացատրէ՛ միտքդ, դուստր իմ:

ՀԵԼԵՆԵ

Արտաւազդ գաղտնի վիշտ մ'ունի, վիշտ դժբաժնալ, զոր ինձմէ ալ կը ծածկէ. այս առաւօտ զինքն սաստիկ այլալայած տեսայ և յուսահատ. կը հաւատամ, հայր, զինքն մեռցընել կը փորձէր:

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ

Ի՞նչ կ'ըսես... անձնապանութիւն մը... բայց ո՛չ, անկարելի է:

ՀԵԼԵՆԵ

Այո, ես իւր բազուկը բռնեցի. իսկ երբ պատճառն իմանալու դիտամբ զինքն թախանձեց, անորոշ պատասխաններ և անտեղի պատճառանք ի մէջ բերելով, քովէս խոյս տուաւ:

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ

Թշուառ երիտասարդ... Ի՞նչ անհնարին վիշտ արդեօք առ այս զինքն կը բռնադատէ... իսկ դու Հելենէ այդպէս դանդաղ կը շարժիս. ինչո՞ւ չ'ես փութար պատուիր այն ազնիւ կեանքը. օ՛հ փութա՛ գուցէ ժամանակին չըհասնիս. նայէ՛ որ զինքն գտնաս և ձեռքէն երկաթը յափշտակես... զոնէ պէտք էր որ հօրն ազդ տայիր...

ՀԵԼԵՆԵ

Հայր իմ, ես մէկէն՝ ետէն վազեցի, պալատիս շորս կողմը զինքն փնտնեցի, բոլոր պալատականաց հարցուցի. մա՜նքն ալ տեսած են պալատիս սրահներէն խուճապեալ անցնիրն, սա՛ կայն ո՛ւր ըլլալն ոչ ոք գիտէ:

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ

Դարձիր դուստր իմ, զինքն միւսանգամ փնտռէ՛ և մի՛ դադարիր մինչև որ զինքն գտնաս. նայէ՛ մանաւանդ որ զինքն առանձին չըթողուս, միանգամայն յուսահատութեան պատճառն իմա՛. ցիր. Դարձեալ յիշէ՛ միշտ ինչ որ քեզ ըսի. սիրէ՛ զորդին, բայց կասկածէ՛ և ասէ՛ զհայրն... զնա հիմայ, ուրիշ ատեն աւելի որոշ կերպիւ միտքս քեզ կը հաղորդեմ:

ՀԵԼԵՆԵ

Կ'երթամ հայր... ո՛հ սիրտս կը բաբախէ... ծունգուղներս կը դողան: (կ'իյայ)

ՏԵՍԻԼ Բ.

ՆԵՌՊՏՐԱՄԵՆՈ (առանձին)

Միթէ պէ՛տք էր որ զինքն այդ աստիճան սիրէի... զԱրդուարդ կ'ատեն, զինքն դաւաճանել կը խորհիմ, մինչ զորդին կը սիրեմ և կ'ուզեմ որ Հելենէ ալ զինքն սիրէ՛... բայց առ պատա՛նին զոր ակամայ որդւոյս չափ կը սիրեմ, ինչո՞ւ այդպէս յուսահատաբար իւր կենանքը դաւել կը խորհի... Ի՞նչ բուռն վիշտ կրնայ ունենալ այն երիտասարդ տարիքն, որ այդպէս իւր հոգւոյն երկիւնքը կ'ամպտէ. Ի՞նչ իրեն կը պակսի. հայրն զինքն կը զգուէ, հայրենեանց ակնկալութիւնն է, Հելենէ իրեն համար բոլորովին սէր է. Թափառցե՛նք արդեօք արիւնախանձ ռիս զոր սրտին մէջ իւր հօրն դէմ կը սնուցանեմ... բայց ի՞նչպէս, զի ոչ ոք գիտէ: Արտաւազդ՝ դստերս արեւն է, Հելենէ նովա կենդանութիւն՝ կ'առնու, Հելենէ Արտաւազդին լուսինն է զի նովա կը լուսաւորուի: Ո՛հ, ի՞նչ ցաւ սրտիս մէջ ձգեց Հելենէ, չէի կարծէր որ զինքն այդ աստիճան սիրէի, նա զի և սիրելու բռնադատուած եմ. վասն զի եթէ դժբաղդութիւն կամ չարիք մ'իրեն պատահի, նոյն զերեզմանն և իմ Հելենէս իւր մէջ պիտի ամփոփէ: Ո՛հ, ապրիւն երկուքն ալ և իմ ծեր օրերս միմիջարեն. հայրն զրկեց զիս ի կնոջէս, չ'եմ փափաքիր որ որդին ալ դուստրս ի սիրտէս յափշտակէ: Սակայն պէ՛տք է՛ նաև որ ուշացնեմ վրէժխնդրութեան զործադրութիւնը. յապաղելն՝ կրնայ երևան հանել մեր գաղտնի խորհուրդը. դարձեալ Պէրթիկէտին քովն ալ լրտեսք և դաւաճանք պակաս չեն: Արդէն կարծեմ որ Արդուարդ կը կասկածի, զի ցրտութեան հետս կը վարդիս. անշուշտ Մակեդոնացի բա՛նակին ի սահմանն Հայոց մօտենալն զինքն կը վարանէ. դժուար է խաբել այն արթուն աչքը. գուցէ ասոր համար ծերակուտին նիստերն հետզհետ

տէ կը շարունակին. իսկ Արդուարդ հագիւ թէ վրաստանէն դարձած, ծերակուտին եւ իւր մէջ իրթեանէն կրկնապատիկ աւելի կը յաճախէ: Պէտք է փութացընել հոս զՄակեդոնացիս եւ զՀայոց գանգաւորու պատճառ մը գտնել:

(Մակեդոնացի գինուոր մը ներս մտնելով)

Տէ՛ր, Պէրթիկէս իշխանապետին կողմէն Ամին, թէս զօրավարն հոս եկած է եւ զձեզ անձամբ տեսնել կը խնդրէ:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Ամինթէ՛ս՝ Մակեդոնացի բանակին զօրապետն, իմ վաղեմի բարեկամս եւ Պէրթիկէսին մտերիմ խորհրդակիցն... չո՛ւտ մտոցեք զինքն հոս. իրեն կ'սպասեմ: (գինուորի կ'ըլլայ) Ի՜նչ պատճառ աղբալէս կը փութացընել Ամինթէսին հոս գալուտոք. բայց այդ լուրն իմ խորհուրդս աւելի փութով պիտի յաշդէ:

ՏԵՍԻԼ Գ.

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ, ԱՄԻՆԹԵՍ

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Բարձր ըլլայ ի Հայաստան գալուտող, տէ՛ր զօրապետ. անշուշտ յաշդ լրոց աւետաբեր է քու հոս ներկայութիւնդ:

ԱՄԻՆԹԵՍ (ժողով քուրք մը հանելով)

Տէ՛ր կուսակալ, հրամայեալ է ինձ Պէրթիկէս իշխանապետին կողմէն, որպէս զի աս նամակը ի ձեռք քո յանձնեմ: (Թուղորը Նիկոպոլոմեոսին ձեռքը կու տայ)

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ (թողորը Կոնստանտինի կը կարդայ)

« Պէրթիկէս մեծ իշխան առ Նէոպոլոմեոս՝ « քնդհանուր կուսակալ Հայոց ողջոյն: Մեր իշխանական հրամանն առնելուդ պէս, կը խնդրեմք « որ պահանջես Հայոց Արդուարդ իշխանէն, « կապաղովկիոյ նախորդ թագաւորին որդին « Արիսթէս սեպուհը, զոր եւ առնուդ պէս լըղ « թայակապ մեր Ամինթէս զօրավարին ձեռքը « կը յանձնես: Եթէ Հայք մերժեն եւ կամ հնա « գանդելու հակառակին մեր բարձրագոյն հրա « մանաց, Ամինթէսի իշխանութիւն տրուած է « անյապաղ Արմաւիրի վրայ յարձակելու, որպէս « զի զինուք Հայերը բռնադատել մեր հրամանին « հնազանդելու: Պէտք եղած միջոցները միտեղ « ի գործ կը դնեք. Ողջ լե՛ր: Պէրթիկէս իշխա « նապետ եւ ինամակալ կայսերութեան Մակե « դոնացոց »: (Նիկոպոլոմեոս թողորը համբոյ յընդ ժողը կը դնէ) Առ իս Լիւսանդր. (պաշտօնակալ մը ներս կը մտնէ. Նիկոպոլոմեոս՝ պաշտօնակալին) գնա աղաչէ զԱրդուարդ իշխանը եւ

ըսէ իրեն, թէ Պէրթիկէս իշխանապետին կողմէն Ամինթէս զօրավարն հոս եկած ըլլալով, ամեն նակարեւոր խնդրոյ մը համար հարկաւոր է իւր ներկայութիւնն: (պաշտօնակալը կ'ըլլայ)

ԱՄԻՆԹԵՍ

Ի՜նչ, փոխանակ հրամայելու որ հոս գայ, դու զինքն կ'աղաչե՛ս:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ (հոգեոց հանելով մը)

Դեռ քիչ մը ժամանակ այդպէս վարուելու բռնադատուած եմ. այլ դու ըսէ՛ ինձ, ե՛րբ կը կարծես որ Մակեդոնացի բանակն յԱրմաւիր կրնայ հասնիլ:

ԱՄԻՆԹԵՍ

Այս գիշեր եթէ հարկ կը տեսնես:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Ա՛յս գիշեր...

ԱՄԻՆԹԵՍ

Այո՛. արդէն, յառաջապահ գունդերն մինչև Արմաւիրի Անահայ անտառին մէջ հասած են:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Հատ լաւ. ուրեմն ստոյգ ես թէ այս գիշեր կրնաս քաղաքիս մէջ մտնալ:

ԱՄԻՆԹԵՍ

Այո՛. բայց ինչո՞ւ այդ Հտապոլոմեոս:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Վասն զի ես Հայերը կը ճանչնամ, մանաւանդ Արդուարդ իշխանը. ուստի չ'եմ կարծեր որ յօ ժարին... բայց ահաւասիկ ինքն... ուրեմն այս գիշեր:

ԱՄԻՆԹԵՍ

Այս գիշեր:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Ե՛րբ...

ԱՄԻՆԹԵՍ

Երբ Անահայ տաճարին նուիրական պղինձն կէս գիշերը հնչէ, Մակեդոնացիք պարսպաց առջև պիտի գտնուին:

ՆԵՈՊՏՂՈՄԵՆՈՍ

Լռեմք եւ բնաւ կասկած չըտանք մեր խորհրդադոյն նկատմամբ:

Տ Ե Ս Ի Լ Դ .

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ, ԱՄԻՆԹԵՍ, ԱՐԴՈՒԱՐԴ,

ՀՐԱՆՏ

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Իշխանդ Հայոց մեծաց, Պէրթիկէս իշխանապետին հրամանն է՝ որ առանց յապաղելու յանձնէք ի ձեռս Ամինթէս զօրավարին զԱրիաթէս կապաղովկիացի ապստամբ սեպուհը:

ԱՐԴՈՒԱՐԴ

Պէրթիկէս Հայոց այդպիսի հրաման մը տալէն առաջ, պէտք էր որ նախ զամէն Հայ բնաջինջ ընէր. իսկ Հայք հնազանդելու համար, պէտք էր որ նախ իրենց Հայ Ըլլալը մոռնային: Հայք դաշնադրութեան ուխտը մինչև հիմայ հաւատարմութեամբ պահեցին, միանգամայն իրենց հարկը հատուցանելով. սակայն ազատ են ընդունելու իրենց մէջ բարեկամ հիւր մը:

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Բայց այդ հիւրն ապստամբ մ'է, տէր իշխան. Արիաթէս զինուոր դէմ կ'ենցա Մակեդոնացւոց, անոնք ձեռաց տակ յանձն չ'առաւ նուաճել և հոս իւր կնգրոնը փոխադրելով, ապահովապէս և անպատուհաս, յեղափոխութեան և վտարանջութեան կը զրգոէ զկապաղովկիայ. իւր ոսկունքն եղազակաց խուճերն և լրտեսներ հոն կը խրկէ. ասով չը շատանալով, զձեզ ալ կը զրգոէ Մակեդոնացւոց դէմ: Ապստամբի մը զաղտնի թեւածու և պաշտպան Ըլլալն, տէր իշխան, յայտնի թշնամութիւն և ապստամբել է Մակեդոնացւոց կայսերութեան դէմ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Հայք իրենց պարտքը ոչ Պէրթիկէսէն և ոչ Արիաթէսէն կը տուրին: Սակայն որ իրաւամբ յափշտակեց Պէրթիկէս Արիաթէսի ժառանգութիւնը. միթէ իրաւունք չ'ունի՞ զրկեալ իշխանն զարձակ ձեռք ձգելու հայրենի երկիրը: Արիաթէս Մակեդոնացւոց բռնութենէն խոյս տալով և վտահանալով Հայոց իւր հօրն հետ ունեցած հին բարեկամութեանն, մեր քովն ապաւինեցաւ և մեզմէ ալ իբրեւ բարեկամի որդի ընդունելու թիւն գտաւ. նա՞ զի և մեր թշնամին Ըլլար, զինքն ընդունելն մեր պարտքն էր: Իսկ ի՞նչ կը պահանջէ մեզմէ Պէրթիկէս, որպէս զի Արիաթէսին ձեռքն և ոտքը կապելով իրեն յանձնեցր. այդ դաւաճանութեան և մատուցութեան յանձնառու չ'են Ըլլար Հայք:

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Ուրեմն կը մերժեն Պէրթիկէսի հրամանը և

ստիցդ տա՛ց կ'առնուս խաղաղութեան դաշինքն, որ կ'արգելու ձեռնտու չ'ըլլալ Մակեդոնացւոց թշնամեացն:

ԱՐԴՈՒԱՐԴ

Այո, կը մերժեմ այդպիսի վատ և անիրաւ պահանջումներ մը. Արիաթէս ազատ է. իրեն ասպնջական են Հայաստանի քաղաքներն և քաղ են սահմանքն. ըստ իւր հաճոյից կրնայ հոս մնալ և մնկնիւ. իսկ եթէ մտգոհութեան նոր առիթ մը կը փնտռէ Պէրթիկէս, Հայք չ'են վախնար, և պատրաստ են զինուոր վանելու իւր բռնաւորքը:

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Այդ լեզուն՝ ձեր յեղափոխական խորհրդոցն յայտնի ապացոյցն է... այլ ի զօր կը զգուէք այդ իօլ անուրջքը. սակայն նախ անձամբ կարդա՛ իշխանապետին հրամանը (թուղթը) (Լրդուարդին կ'իւրկրեցրկէ. չեղապտղոմէոս մեկուսի) Ո՛հ, պէտք է անապարել վրէժնեղութեան զործադրութիւնը:

ԱՐԴՈՒԱՐԴ (թուղթը կարդալէն վերջը)

Ա՛հ, բռնութեամբ ուրեմն կ'ուզէք զմեզ նուաճել... կ'սպառնաց ալ... ա՛հ, յիրաւի մեզ կը յիշեցնէք թէ բաւական համբերեցին Հայք, թէ մենք ալ թօթափելու լուծ մ'ունիմք, թէ մեր հարց ազատութեան զրօշկան բաւական հեծեծ ձեր շղթայից տակ, և թէ զայն ի գերութենէ ազատելու օրն հասած է... սակայն հարկ չ'էր որ զայդ մեզ յիշեցնէիք... ապա ուրեմն զրէ՛ իշխանապետին, թէ Հայք չ'են ընդունիր իւր հրամանը և յամենայնի պատրաստ են. ահա՛ մեր վերջին պատասխանը:

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Ուրեմն յայտնապէս կը վտարանջէ՞ք:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ազատ ծնած են Հայք և ազատ կը մեռնին:

ՆԵՌՊՏՂՈՄԵՌՈՍ

Կ'երթամ պատասխանդ գրելու իշխանապետին: (մեկուսի) Ա՛հ, վերջապէս սա Հայկայ թոռներէն վրէժս այս գիշեր պիտի հանեմ: (Ալիմբէս և Նեոպտղոմէոս դուրս կ'ըլլան)

(Շարունակելի)

ՍԵՊՈՒԼ ՄԻՆԱՍԵԱՆ

